



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 24 » 08 2020թ.

№ 08/ԼԱ-316

**Օգոստոսի 17-23-ը դիտված հիդրոօդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Օգոստոսի 17-ի գիշերը շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ՝ մինչև 1-9մմ քանակությամբ (Գորիսում՝ 12մմ), 17-ի ցերեկը, 18-ին առանձին շրջաններում 1-2մմ (Մարտունիում՝ 4մմ) քանակությամբ: Օգոստոսի 19-20-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: 21-23-ին շրջանների զգալի մասում ևս դիտվել է անձրև, ամպրոպ՝ Կապանում՝ 52մմ, Մարտունիում՝ 32մմ, Աշտարակում 22մմ, մնացած կայաններում մինչև 16մմ քանակությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը օգոստոսի 17-18-ին նորմայից ցածր է եղել 2-5, 19-ին՝ 1-2 աստիճանով, օգոստոսի 20-21-ին՝ բարձր 1-2 աստիճանով, 23-ին՝ ցածր 4-7 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է օգոստոսի 20-21-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է $+34...+36^{\circ}\text{C}$, Տավուշում՝ $+27...+32^{\circ}\text{C}$, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+25...+30^{\circ}\text{C}$:

Ամենացածր ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում գրանցվել է օգոստոսի 20-ին և 23-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+8...+13^{\circ}\text{C}$ (Աշոցքում $+4^{\circ}\text{C}$, Գավառում՝ $+6^{\circ}\text{C}$), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ $+13...+16^{\circ}\text{C}$ (Դիլիջան՝ $+10^{\circ}\text{C}$), Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ $14...+19^{\circ}\text{C}$:

Օգոստոսի 21-ին Սեմյոնովկայում դիտվել է կարկուտ 17մմ տրամագծով:

Օգոստոսի 17-ին Երևանում երեկոյան ժամերին դիտվել է քամու ուժգնացում 7-8 մ/վրկ արագությամբ, պողթկումները մինչև՝ 15մ/վ, օգոստոսի 18-ին Աշտարակում՝ 16մ/վրկ արագությամբ՝ 19մ/վրկ պողթկումով, 21-22-ին՝ Եղվարդում, Սևանում, Աշտարակում, Երևանում 15-20մ/վրկ պողթկում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել՝ 1900.70 մ (23.08.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 3 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան